ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Պ-726[4]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 13.5-րդ հոդվածով.

«Հոդված 13.5. Բանկային գաղտնիքի տրամադրումը Հաշվեքննիչ պալատին

1. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով սահմանված հաշվեքննության (ստուգման) օբյեկտի մոտ առկա վարկային տեղեկատվության կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

~~*Առաջին*~~ *Երկրորդ ընթերցում*

Պ-726[4]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 13.5-րդ հոդվածով.

«Հոդված 13.5. Բանկային գաղտնիքի տրամադրումը Հաշվեքննիչ պալատին

1. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով սահմանված հաշվեքննության (ստուգման) օբյեկտի մոտ առկա վարկային տեղեկատվության կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-~~իցպաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[2]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1), «Ներքին աուդիտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[3]-27.11.2023-ՖՎ-011/1), «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[4]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1), «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[5]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1), «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝), «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[7]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1), «Հաշվապահական հաշվառման եւ աուդիտորական գործունեության կարգավորման եւ հանրային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[8]-27.11.2023-ՖՎ-011/1), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[9]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1) եւ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[10]-27.11.2023-ՖՎ-011/1) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Արուսյակ	«Հաշվեքննիչ	Սահմանել Հաշվեքննիչ	Նշված առաջարկությունը բխում է ISSAI-	Ընդունվել է

Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան	պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 4-րդ հոդվածի 30-րդ և 31-րդ կետեր, 5-րդ հոդվածի 1-ին մաս, 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ, 13-րդ հոդվածի 4-րդ մաս, գլուխ 6, 59-րդ և 60-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1)	պալատում ծառայությունը որպես պետական ծառայության նոր տեսակ՝ ներդնելով տվյալ ծառայության, ինչպես նաև քաղաքացիական ծառայությունից վերջինիս անցման իրավական կառուցակարգեր: Սահմանել, որ Հաշվեքննիչ պալատի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակվելու է իրականացվել քաղաքացիական ծառայություն:	ներին համահունչ՝ ՀՊ կազմակերպչական անկախության ապահովման անհրաժեշտությունից: Քաղծառայության համակարգում հորիզոնական շարժունակության սկզբունքը հաշվեքննության գործընթացում ընդգրկված ՀՊ ծառայողների դեպքում կիրառելի չէ՝ հաշվի առնելով, որ խոսքը գնում է արտաքին աուդիտորների մասին, որոնք հանրային կառավարման համակարգում բացակայում են, բայց փոխարենը այսպիսի աշխատատեղեր կան մասնավոր հատվածում:	
Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ	Սահմանել, որ հարկային մարմնում առկա տեղեկատվության հիման վրա, սույն	Առաջարկված կարգավորումն անհրաժեշտ է՝ հաշվի առնելով. • սահմանադրի կողմից ՀՊ-ին վերապահված առաքելության իրականացմանը միտված **համարժեք**	Ընդունվել է

Հակոբյան	կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ, 35-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասեր (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ *Պ-726[9]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1*):	օրենքով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող Հաշվեքննիչ պալատի ծառայողների համար պետք է ապահովվի Հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով, Հայաստանի Հանրապետությունում գործող՝ միջազգային խմբի անդամ հանդիսացող եւ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների՝ ըստ համադրելի պաշտոնների միջին վարձատրությանը համապատասխան աշխատավարձ և կարգավորել վարձատրության առաջարկվող մեխանիզմի իրացման	**որակով հավելյալ** արժեքի տրամադրման անհրաժեշտությունը. • **աշխատաշուկայի** աուդիտորական ծառայությունների **սեգմենտի միասնական բնույթը** (ներառում է ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային հատվածները) և տվյալ սեգմենտում ձևավորվող միասնական հավասարակշիռ աշխատավարձի հանգամանքը. • ինստիտուցիոնալ առանձնահատկություններով պայմանավորված ՀՀ օրենսդրությունում պարունակվող բացառությունների **անալոգիան** (օրինակ՝ ԿԲ-ում ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները):	

		համար անհրաժեշտ հարակից հարաբերությունները:		
Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1)	Սահմանել, որ իրավաբանական անձանց ստուգման Հաշվեքննիչ պալատի գործառույթը չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենքներով անորոշ թվով հասցեատերերի համար սահմանված հարկային արտոնությունների վրա:	Առաջարկվող լրացումն անհրաժեշտ է՝ հստակեցնելու համար, որ ՀՊ ստուգման գործառույթը տարածվելու է միայն որոշակի հասցեատիրոջը տրամադրված հարկային արտոնության գնահատման վրա:	Ընդունվել է
Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 35-րդ հոդվածի 3-րդ մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023,26.02.2024	Սահմանել, որ Հաշվեքննիչ պալատը յուրաքանչյուր տարի կազմում եւ Կառավարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (ծախսերի նախահաշվի նախագիծը) «Հայաստանի	Բյուջետային գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով հանվել են «Հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով» բառերը:	Ընդունվել է

	-ՖՎ-011/1)	Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:		

Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 35-րդ հոդվածի 3-րդ մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1) «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726[4]-27.11.2023,26.02.2024-ՖՎ-011/1)	Սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 36-րդ հոդվածը, 39-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը շարունակում են համապատասխանաբար վերաբերելի մասով (mutatis mutandis) գործել 2018 թվականի հունվարի 16-ին ընդունված Հաշվեքննիչ պալատի մասին օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի, 57-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները: «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:		Ընդունվել է

Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան	Փաթեթը համալրվել է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով	«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքը լրացվել է 14.5 մասով, 1-ին հավելվածում «Հաշվեքննիչ պալատի նախագահ 15.00» և «Հաշվեքննիչ պալատի անդամ 10.00» տողերն ուժը կորցրած ճանաչել: Սահմանել Հաշվեքննիչ պալատում ծառայության վարձատրությունը «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումներին համապատասխան:		Ընդունվել է